<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> N 4

10.06.2021թ. կայացած շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի վերաբերյալ

ք. Երևան **11.06.2021թ.**

2021 թվականի հունիսի 10-ին տեղի ունեցավ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում որոշվեց նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ որոշում ընդունել:

Քվեարկությանը մասնակցում էին

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ.Քերոբյան - Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար

Կառավարաման խորհրդի անդամներ՝

Լ.Նանուշյան - Առողջապահության նախարարի տեղակալ

Վ.Սիմոնյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա.Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Կ.Միրզաբեկյան - ՀԱՊՀ դասախոս, դոցենտ

Ա.Հայրապետյան - Ֆինանսների նախարարի տեղակալ

Կ.Սահակյան -Երևանի պետական համալսարան, դասախոս, տնտեսագիտություն և կառավարում ֆակուլտետ, ֆինանսահաշվային ամբիոն

Ս. Պետրոսյան -խորհրդի քարտուղար

Հրավիրված էին՝

Ա. Կոտոյան- ՇՎՏՄ ղեկավար,

Ա. Մկրտչյան- ՇՎՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա. Դանիելյան-ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի Շուկայի վերահսկողության և Սննդամթերքի

անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ.Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է: Խորհրդի նախագահը ներկայացրեց օրակարգը:

Խորհրդի անդամները միաձայն հաստատեցին խորհրդի օրակարգը:

1.Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ:

(Զեկուցող՝ Ա. Կոտոյան)

Ա.Կոտոյանը ներկայացրեց նախորդ նիստին տրված հանձնարարականների վերաբերյալ թվով 4 կետ: Նաև հավելեց, կատարված օրենսդրական փոփոխությունների շրջանականում անհրաժեշտ է ձեռք բերել չափանոթներ ստուգումներն իրականացնելու նպատակով:

Մասնավորապես քննարկվեց հանրությանը ստուգումների արդյուքնների վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացման վերաբերյալ հարցը՝ դիտարկելով յուրաքանչյուր իրավախախտում իրականացրած տնտեսավարողի վերաբերյալ հանրության իրազեկման մեխանիզմները:

Վ.Քերոբյանը առաջարկեց տեսչական մարմնի կողմից կատարված ստուգումների վերաբերյալ հրապարակվող հաշվետվություններում հրապարակել նաև իրավախախտում հայտնաբերված տնտեսավարողների վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով գործունեության իրականացման հասցեն:

2.Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատումը:

(Զեկուցող՝ Ա. Սարգսյան)

Ա. Ասոյանը առաջարկեց հարցը ներկայացնել կառավարման խորհրդի էլեկտրոնային քվեարկությանը: Խորհրդի անդամների 7 կողմ ձայնով որոշվեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատումը ներկայացնել խորհրդին՝ էլեկտրոնային քվեարկության:

3. ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թվականի N 706-Ա և 11 հունիսի 2018 թվականի N 732-L որոշումների մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ քննարկում:

(Զեկուցող՝ Ա. Կոտոյան)

Արմեն Կոտոյանը Խորհրդին ներկայացրեց ՀՀ վարչապետի 11 հունիսի 2018 թվականի N 706-Ա և 11 հունիսի 2018 թվականի N 732-Լ որոշումների մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշումների նախագծերը:

Վահան Քերոբյանը առաջարկեց նշված որոշումների հիմնավորումներում ներառել ֆինանսական վերլուծություններ՝ հիմնավորելով, որ նախագծերի ընդունման պարագայում տեսչական մարմնի կողմից ծախսվող միջոցները կօգտագործվեն առավել արդյունավետ, և համապատասխան հիմնավորումներով հարցը ներկայացնել կառավարման խորհրդին՝ էլեկտրոնային քվեարկություն:

Խորհրդի անդամների 7 կողմ ձայնով որոշվեց հավանություն տալ նախագիծը էլեկտրոնային քվեարկություն ներկայացնելու նախագահի առաջարկին:

4. Համաձայնեցնել հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթիվը:

(Զեկուցող՝ Ա. Կոտոյան)

Վ. Քերոբյանը առաջարկեց հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի նիստի օրակարգում ներառել բոլոր այն հարցերը, որոնք ներառված են եղել օրակարգում բայց չեն զեկուցվել ժամանակի սղության պատճառով, ինչպես նաև առաջարկեց հաջորդ նիստի օրակարգում ներառել քայքայվող պլաստիկի կիրառման և վերահսկողությանը առնչվող հարց, իսկ հաջորդ նիստը անցկացնել 2021 թվականի հունիսի 24-ին ժամը 16:00-ին:

Խորհրդի անդամների 7 կողմ ձայնով որոշվեց հավանություն տալ առաջարկին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ.Քերոբյան**
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ս.Պետրոսյան**
ստորագրություն